ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 25

ՕՐԱԿԱՐԳ

1.«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրի» նախագծի քննարկում:

Ս.թ. սեպտեմբերի 5-ից սեպտեմբերի 24-ը տեղի է ունեցել հարցմամբ անցկացվող Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 25-րդ նիստը, որի ընթացքում քննարկվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության 2017 թվականի տարեկան ծրագրի» նախագիծը /այսուհետ՝ Նախագիծ/:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի անդամներից ստացված կարծիքները ուսումնասիրվել են, որի արդյունքում Նախագծում կատարվել են անհրաժեշտ փոփոխություններ: Այնուհետև Նախագիծը սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Նախագծի վերաբերյալ Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող ազգային հանձնաժողովի 15 անդամից 10-ը տվել են դրական եզրակացություն, 3-ը՝ բացասական, 1 անդամ չի մասնակցել նիստին առողջական խնդիրների պատճառով, 1-ը գտնվում է արտերկրում:

ՈՐՈՇՎԵԼ Է՝

Հավանություն տալ «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5.1 հոդվածին համապատասխան մշակված Նախագծին՝ այն սահմանված կարգով ՀՀ կառավարություն ներկայացնելու նպատակով:

ՀԱՆՁՆԱՐԱՐՎԵԼ Է՝

Հանձնաժողովի անդամ պարոն Ա. Ալավերդյանի ներկայացրած առաջարկների 4-րդ և 5-րդ կետերը դարձնել հանձնաժողովի առաջիկա նիստերից մեկի քննարկման հարց՝ խնդրի լուծման առավել արդյունավետ ձևաչափ գտնելու նպատակով:

Հանձնաժողովի անդամների առաջարկությունների, առարկությունների և հատուկ կարծիքների վերաբերյալ ամփոփաթերթը կցվում է:

Առդիր՝ 4 էջ:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.ԱՍԱՏՐՅԱՆ**

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Ա.ԿԵՍՈՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ - ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկության, առարկության հեղինակը	**Առարկության և առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացությունը**	**Նախագծում կատարված փոփոխությունը**	**Հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը**
«Սկարպ» առողջական կենտրոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Մկրտչյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել		-	-
«Հայաստանի կույրերի միավորում» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Հակոբյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել	-	-	-
«Հայաստանի խուլերի միավորում» ՀԿ-ի նախագահ պարոն Գ. Գրիգորյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել	-	-	-
«Հատուկ կարիքներով մարդկանց աջակցության «Ունիսոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ա. Ալավերդյան	1. Խմբագրական բնույթի առաջարկներ	Ընդունվել է	Նախագիծը խմբագրվել է:	«Իմ կողմից ներկայացված բոլոր առաջարկները խորքային և էական նշանակություն ունե՛ ոլորտի զարգացման համար»
	2. Հայաստանում ներառական բարձրագույն կրթության ներդրման Գործողությունների ազգային ծրագրի մշակում	Ընդունվել է ի գիտություն	Հայաստանում ներառական բարձրագույն կրթության ներդրման Գործողությունների ազգային ծրագրի մշակումը 2017-2018թթ. ընթացքում կատարվող աշխատանք է և այն Նախագծում ներառել նպատակահարմար չէ, քանի որ ակնկալվող արդյունքը հնարավոր չէ հստակեցնել: Հաշվի առնելով ժամկետների անորոշությունը Կետը ներառվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող	

			հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծում:	
	3. Աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց խորհրդատվական, ուսուցողական և միջնորդական աջակցության տրամադրում «Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության կենտրոնում» **/11 աշխատողի աշխատավարձի վճարում/ /9 603.3 հազ. դրամ/**	Ընդունվել է ի գիտություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից «Ունիսոն» ՀԿ-ին տրվել է մատուցվող ծառայությունների նկարագրի ձևաչափ, որը սահմանված կարգով ներկայացնելուց և ուսումնասիրելուց հետո միայն հնարավոր կլինի որոշել կենտրոնի ֆինանսավորման նպատակահարմարության հարցը:	
	4. 2018թ.-ից սկսած սայլակների փոխարեն համապատասխան գումարի վաուչերների (հավաստագրերի) բաշխելու հնարավորության ուսումնասիրություն:		Հանձնարարվել է կետը դարձնել Հանձնաժողովի առաջիկա նիստերից մեկի օրակարգային հարց՝ ուսումնասիրության արդյունավետ ձևաչափ ընտրելու նպատակով: Բացի այդ պրոթեզաօրթոպեդիկ, վերականգնողական պարագաների և այլ տեխնիկական միջոցների տրամադրման նոր մոտեցումների մշակում միջոցառումը ներառվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծում:	

	5. Հաշմանդամության 1-ին խումբ չունեցող, սակայն սայլակի կարիք (մշտական կամ ժամանակավոր) ունեցող անձանց սայլակների տրամադրման խնդրի ուսումնասիրություն և հնարավոր լուծումների մշակում:	Ընդունվել է ի գիտություն	Հաշմանդամության 1-ին խումբ չունեցող, սակայն սայլակի կարիք ունեցող անձանց սայլակ հիմնականում տրամադրվում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ տարբեր ձևաչափերով աշխատող կազմակերպությունների («Սատար» ՀԿ, «Փյունիկ» ՀԿ, Ազգային մակարդակում սոցիալական համագործակցության համաձայնագրի սոցիալական համագործակցության աջակից ցանց) և բարեգործական հասարակական կազմակերպությունների միջոցով: Միևնույն ժամանակ հանձնարարվել է կետը դարձնել Հանձնաժողովի առաջիկա նիստերից մեկի օրակարգային հարց՝ ուսումնասիրության արդյունավետ ձևաչափ և խնդրի հնարավոր այլ լուծումներ գտնելու նպատակով:	
«Հույսի կամուրջ» հաշմանդամ երեխաների և երիտասարդների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ տիկին Ս. Թադևոսյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել	-	-	Եզրակացություն չի ներկայացվել երկրից բացակայելու պատճառով
Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության նախագահ պարոն Հ. Աբրահամյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել	-	-	-

«Աստղիկ» հաշմանդամ երեխաների ծնողների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ պարոն Լ. Ներսիսյան	1. Խնդիրների բաժնում առաջարկում ենք ավելացնել ևս մեկ կետ հաշմանդամություն ունեցող անձանց համար քաղաքաշինական և ճարտարապետական միջավայրի բարելավում	Ընդունվել է ի գիտություն	Քաղաքաշինական և ճարտարապետական միջավայրի բարելավման ուղղված միջոցառումները ներառված են նախագծի Հավելված N 2-ում:	«Անհրաժեշտ է մշակել ծրագրերի վերահսկողության արդյունավետ մեխանիզմներ»
	2.Գործողությունների բաժնում ավելացնել մեկ գլուխ Հաշմանդամություն ունեցող անձանց համար իրականացվող ծրագրերի մշտադիտարկում, վերահսկողություն և այն իրականացնելու մեխանիզմների մշակում	Ընդունվել է ի գիտություն	Հաշվի առնելով այն, որ կետով նախատեսված միջոցառումը չի կարող սահմանափակվել միայն 2017 թվականով՝ կետը ներառվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2016-2021 թվականների համալիր ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծում:	
«Հաշմանդամների «Փարոս» կրթության և մշակույթի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ պարոն Ս. Օհանյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել	-	-	-
«Լիարժեք կյանք» հասարակական ՀԿ- պարոն Ս. Մաղաքյան	Առարկություններ և առաջարկություններ չի ներկայացվել	-	-	-
ՀՀ գործադիր իշխանության մարմիններ հանդիսացող Հանձնաժողովի անդամներ /ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, տարածքային կառավարման, կրթության և գիտության ֆինանսների նախարարություններ/	Առարկությունները և առաջարկություններ ամփոփվել է սահմանված կարգով և ուղարկվել ՀՀ կառավարություն	-	-	-